№ 39 Մարտի 4 (16) 1881 Մարտի 4 (16) № 39

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կայսր Ալէքսանդր II. Բարձրագոյն մանիֆէստ. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Նամակ Գերմանիայից. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դաւիթ բէկ.

ԿԱՅՍՐ ԱԼԷՔՍԱՆԴՐ II.

Վախճանվել է Նա, որ 26 տարի ղեկավարել է պետութեան բոլոր գործերը, որի ձեռքում էր Ռուսաստանի ամբողջ բաղդը: Քսան և վեց տարվայ ընթացքում կատարվեցան Ռուսաստանում Նրա կամքով այնքան, որքան ուրիշ երկիրներում դարերի ընթացքում է կատարվում: Քսան և վեց տարվայ, ինչպէս շատ կարճ ժամանակամիջոցում, կատարվեցան այնպիսի վերանորոգութիւններ, որոնց իւրաքանչիւր ազգութիւն պարծանքով կարձանագրէր իր պատմութեան էջերի վրայ:

Ճորտերի ազատութիւնը, դատաստանական նոր կանոնադրութիւնը, քաղաքային և նահանգական ինքնավարութիւնը, մարմնի պատիժների վերցնելը, մամուլի աւելի ազատ իրաւունքները, կանանց բարձրագոյն ուսման իրաւունքի տալը, ընդհանուր զինուորագրութիւնը, — ահա այն խոշոր, ընդհանուր մարդկային վերանորոգութիւնները, որոնք հանգուցեալ Կայսրի կամքով մին միւսի ետևից կատարվելով, մի անգամից գրեցին Ռուսաստանը եւրոպական միւս երկիրների շարքում:

Այս ես չենք խօսում աւելի մանաւոր և միայն Ռուսաստանի ներքին կեանքին վերաբերեալ բազմաթիւ վերանորոգութիւնների մասին, որոնց առատաձեռնութեամբ պարգևեց հանգուցեալ Թագաւորը իր հպատակներին: Ամբողջ քսան և վեց տարին, բայց մանաւանդ այդ փառաւոր Թագաւորութեան առաջին և վերջին երկու տասնեակները մի եռանդոտ աշխատանք էր կատարվում, ամեն հին ձևերին ձեռք էր տրվում, ամեն եղած կազմակերպութիւններին նոր ոգի էր ներշնչվում: Մի կողմից հիմնվում էին նոր դպրոցներ և գիմնազիաներ, լիցէյները համալսարանների կերպարանափոխվում, գրվում էր համալսարանական նոր կանոնադրութիւնը, կազմվում էին յանձնաժողովներ շինականների հողերի հարցը կանոնաւորելու, կամ տպագրական օրէնքները վերաքննելու համար, ուրիշ կողմից հրէայ հպատակները գրեթէ կատարելապէս հաւասարվում էին իրանց իրաւունքների մէջ ռուսաց միւս քաղաքացիների հետ, վերցվում էր ամենքի համար աղի վրա ծանր հարկը, — մի խօսքով ամբողջ Ռուսաստանը իր կեանքի բոլոր ճիւղերում, քսան և վեց տարի շարունակ վերանորոգութիւնների անընդհատ աշխատանքի մէջն էր գտնվում մի մարդու զօրեղ կամքի շնորհով:

Եւ այդ Կայսրը որ այդքան արաւ իր հպատակների համար, տարածեց իր ազատիչ կամքի ուժը և իր պետութիւնից դուրս: Նրա թագաւորութեան պատմութեան փառաւոր էջերից մէկը անջնջելի լինելու է և Թիւրքիայի քրիստոնեայ ազգերի ազատութեան համար պատերազմը:

Եւ ոչ թէ միայն Ռուսաստանի ազգակից սլաւեան ազգերը, բայց և հայոց ազգը իր ազգային և քաղաքական վերակենդանութեամբ պարտական կը լինի Կայսր Ալէքսանդր II-ի զօրեղ պաշտպանութեանը: Նրա անունը անջնջելի կերպով կապված կը լինի միշտ հայոց խնդրի հետ: Կայսր Ալէքսանդր II-ի անձնական համակրութեանը դէպի հայոց ազգը, ինչպէս և դէպի ամեն ճնշված ազգութիւնները, հայերը պարտական են Սան-Ստեֆանոյի դաշնագրի կայանալով և հայոց դատի պաշտպանելով Բերլինի ատենաժողովում:

Ռուսաստանից և մարդկութիւնից պակասեց մի մեծ մարդ, որի պատկերը շատ դարերից յետոյ կերևայ ապագայ սերունդներին ինչպէս մի հսկայ նրան շրջապատող մանր ժամանակակիցների շրջանի միջից:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԷՍՏ

„Միջազգային հեռագրական ընկերութիւնը" հաղորդեց մեզ հետևեալ հեռագիրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի „Правит. Вѣстн." լրագրում հետևեալ բարձրագոյն Մանիֆէստն է հրատարակված. Աստուծոյ Ողորմութեամբ, Մենք, Ալէքսանդր Երրորդ, Կայսր և Ինքնակալ Ամենայն Ռուսաց, Թա-

---

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Ե.

Այժմ պատմենք համառօտ կերպով, թէ Դաւիթ բէկը Վրաստան գալով, նախ որպէս սկսեց իր ասպարէզը:

Ընթերցողը յիշում է այն սոսկալի, փոթորկալից գիշերը, երբ նա Ֆաթալի-խանի բանակից համարձակ փախաւ, յիշում է և այն, որ նա ունէր իր հետ ծերունի ներքինապետից յանձնարարական նամակ հայազգի Օրբէլեան իշխանի վրա, որը պէտք է պատանի Դաւթի հովանաւորն և խնամակալը լինէր նրա պանդխտութեան մէջ: Բայց ծերունի ներքինապետի բոլոր կարգադրութիւնները պատանու ապահովութեան մասին հակառակ ընթացք ստացան, որը նախատեսել, ի հարկէ, նա սկզբից չէր կարող:

Պատանին գալով Մցխէթ, գտաւ Օրբէլեան իշխանին մի շաբաթ առաջ մեռած: Նրա բարեկամները դեռ սուգի մէջ էին: Թէև պատանին ներկայացրեց նրանց ներքինապետի նամակը, բայց հանգուցեալի ազգականներից ոչ ոք կարողացաւ հասկանալ, թէ ով էր նամակի հեղինակը, կամ որքան նշանակութիւն պէտք էր տալ նրա գրածներին: Նկատելով այդ սառն ընդունելութիւնը, պատանին ինքն անյարմար համարեց մի անախորժ բեռն լինել սուգ ընտանիքի վրա, որ առանց դրան էլ անմխիթարացած էր: Սիրտը լի դառնութեամբ, աչքերը լի արտասուքով, որ ստացել էր նա Մցխէթից, վճռեց իր աշխատանքով ապրել, առանց մի ուրիշին ծառայութիւն պաշտօնելու:

Նա յետ դարձրեց իր հետ եղած մարդկանց, գրեց ներքինապետին, թէև իշխանը, որի վրա յոյս ունէր նա, մեռած է, բայց ինքը այնքան ուժ է զգում իր մէջ, որ առանց խնամակալի ևս կարող է այդ երկրում մի պատսպարան գտնել և անհոգ ու անվտանգ ապրել: Վերջացնելով իր նամակը անհուն շնորհակալութիւններով ծերունու բարերարութիւնների մասին, պատանին աղաչում էր նրան, որ այլ ևս իր համար հոգ չը տանէ, որովհետև ինքը կարող է կեանքի մէջ իրան ճանապարհ բաց անել: Իսկ պատանու անձնավստահութիւնը չը պակսեցաւ այն փայլուն յոյսերով, որ երևակայում էր նա:

Ինչ կարող էր անել մի անփորձ պատանի օտար, անծանօթ երկրում, ուր աղքատութիւնը աչքի ընկնող էր ամեն արհեստաւորի վրա, որ աշխատանքը ոչինչ գին չունէր, որ ժողովրդի մեծ մասը ձրիաբար էր գործում մի քանի ծողլ, չալլ, անհրաժեշտ պիտոյքների համար միայն: Իսկ ինքը պատանին ոչ մի գործի համար պատրաստված չէր. արհեստը, որ արհեստաւորների հաւանականութեան պատճառով կարող էր այդ երկրում փոքր ի շատէ գործածութիւն գտնել, — արհեստ չը գիտէր նա: Գիւղում մեծացած, գիւղական հասարակ գիւղացի էր նա, փոքր ի շատէ ծանօթ գիւղական տնտեսութեան: Իսկ մի աշխատութիւն, որ բոլորովին անարգված էր և որի համար հովուական մի բաւական ձեռքեր կային այդ երկրում, — դա էր գիւղական տնտեսութիւնը:

Սկզբում նա սկսեց ծախել իր հետ բերած ոսկիները, որ ընծայել էր նրան Սիւրբին, երբ փողերը սպառվեցան, սկսեց վաճառել իր հագուստները: Միակ բանը, որ նա ամենայն սրբութեամբ պահեց իր մօտ, — դա էր ծերունի ներքինապետի ընծայած թուրը, որը վճռեց չը կորցնել, եթէ քաղցածութիւնից մեռնելու ևս լինի:

Բայց այդ սակաւ կեանքը երկար շարունակվել չէր կարող. պէտք էր մի որ և իցէ գործ գտնել: Սկզբում նա իրան այնքան չէր խոնարհեցնում, որ սոսկ աշխատութիւններից սկսէ, յետոյ այդ մտքի հետ ևս հաշտվեցաւ. դարձաւ ոչ ոք նրան գործ չէր տալիս: Դժբախտութիւնը աւելի և աւելի զգալի էր դառնում: Հայրասիրութիւնը չէր ներում նրան, որ իր թշուառութեան մասին ծերունի ներքինապետին կամ Սիւրբին տեղեկութիւն տայ: Բայց և թէ շատ էլ ցանկանար, ինչ միջոցով կարող էր գրել նրանց: Հաղորդակցութիւններ բնաւ չը կային, պէտք էր առանձին սուրհանդակ վարձել, բայց ինչ փողով, քանի որ ինքը բոլորովին աղքատ էր, և ով յանձն կառնէր փոքր համար Վրաստանի սահմաններից դուրս գնալ: Մի այնպիսի ժամանակ, երբ ճանապարհները լիքն էին աւազակներով, երբ մի ոսկի համար մարդու գլուխ էին կտրում:

Նա ապրում էր մի հայ ճանապարհորդի տանը, որը իր պարզամիտ կնոջից բաց կարգին կառավարելու յետոյ, նրա բանը պարզելով և նրա հարուածները մխիթարելու յետոյ, երբ տեսաւ, որ այլ ևս չ'ուզեցաւ ոչինչ չէ մնացել, իր ապրանքի դուռը ցոյց տուեց նրան ասելով:

—Որդի, ձեզ համար մի ուրիշ տեղ հարկաւոր է, ես մեծ ընտանիքի տէր եմ, իմ դառնութիւնը հազիւ եմ կարողանում պահել:

Նա տանից մի խոշոր աւելցու հեռացաւ: Իւրեն յուսահատութեան մէջ թողեց ամեն և գնաց գէթ մի [illegible]: Հայերն ամեննից չունէին: Իր պանդխտութեան օրերում, անծանօթ, օտար աշխարհում հանդիպեց նա միակ հայերն, որոնց յոյս ունէր փոքր ի շատէ օգնականութեան գտնել, իսկ նա կարողացաւ նրան, ինչ արդարացի: Այժմ ամեն անարգանքների միջոցով [illegible] թեան մէջ աշխատում էր թաքցնել իր ամբողջութիւնը: Ամենաճնշող [illegible] հրաւէրներ չափ սրտանց էր, բայց նա ընկերութեան մէջ ոչինչ գեղեցկութիւն չէր նկատում: Ճրագները [illegible] չքնքշված էին, ծաղիկները [illegible] ժպտում էին, հանգստացնելով տրոփելով հեռաւորութիւնների հետ, բայց այդ բոլորը աւելի բարկացնում էին նրան, աւելի յղկում էին նրա սիրտը մի անասահման տխրութեամբ: Թէ ինչու, Աստուծոյ բոլոր արարածները կարող էին ուրախ, բախտաւոր լինել, իսկ ինքը ոչ:

Ամբողջ օրը թափառելով նա սարերի վրա, դաշտերում, անտառներում, ինքն էլ չը գիտէր, թէ ինչու համար: Ամեն անգամ մի մարդ տեսնելիս, փախստականի նման աշխատում էր չը հանդիպել նրան: Այսպէս անցկացրեց նա, մինչև երեկոյեան, մինչև խաւարը փոքր առ փոքր սկսեց պատել աշխարհը: Այժմ մտածում էր վերադառնալ գիւղը. բայց ում մօտ գնալ, որի դուռը բախել: Միակ ծանօթ մարդը, իր արհեստակիցը, չը պահեց նրան, այն մարդը, որի մէջ ցաւակցութիւն էր որոնում, որին պատմել էր իր բոլոր դժբաղդ անցքերը: Այժմ ուրիշ գիտէր: Վրդովմունքը, յուսահատութիւնը, զզուանքը դէպի ամեն մի հայ ծախսվում էր նրա սիրտը: Վրդովմունքը ինքնասիրութեան չափ ծանր էր նրան: Երկու օր էր որ նա ոչինչ չէր կերել: այժմ ամեն հոգսերից աւելի ստանջում էր նրան քաղցը: Մարմնի մէջ զգում էր սաստիկ թուլութիւն, ոտները հազիւ էին տանում: Մտածեց փոքր ինչ հանգստանալ:

Գիշերային խաւարը բոլորովին թանձրացել էր: Նա գտաւ մի նեղ ճանապարհ, որ տանում էր՝ ինքն էլ չը գիտէր՝ թէ ուր, և առաջնորդվում մի ձորակի մէջ: Այնտեղ լաւ էր, այնտեղ նրան ոչ ոք չէր տեսնի: Նա իր յոգնած մարմինը վայր թողեց, պառկեց խոտերի վրա: Մի քանի րոպէ գլխի տակն թևը դրած, [illegible] մտածելով, որ տեսնէ, թէ որտեղ է գտնվում.